

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

«ՀՈՐԻԶՈՆԻ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԸԱՌԸ ԱՐՏԱՍԱՆԻԱԾ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Գ Ո Ւ Թ Ա Յ Ի Ս

Ամսիս 13-ին մեզ մօտ էլ կատարւեց համազգային Մեծ Յորքեւանը: Պատարագից յետոյ խօսեցին տեղիս քահանան և դպրոցի աւուսուցիչը: Հանգանակութիւն կատարեց դպրոցական Փոնդի օգտին:

Robert

Մ Ա Յ Կ Ո Պ

Մեր գաղութն էլ տօնեց հայ տանրի գիւտի 1500 և սպազրութեան 400-ամեայ յորքեւաններ մեր ուսուցչական խմբի ձեռնբերեցութեամբ:

Կիրակի, ամսոյս 13-ին, այդ առթիւ եկեղեցում հանդիսաւոր պատարագ կար, ուր խօսեց տօնի նշանակութեան մասին հայր Ասկարեան. ապա ծխական ուսումնարանում տեղի ունեցաւ ցերեկոյթ, խաղացւոց Աղ. Աբէլեանի «Փարբջուկ» մանկական պիէսը, մանուկ զերակատարներով, երգւոցին երգեր, արտասանւոցին ոտանաւորներ. տօնի առթիւ խօսեց ուսուց. պ. Յ. Յակոբեան:

Իսկ երեկոյեան հասարակական ակումբում տեղի ունեցաւ հանդիսաւոր երեկոյթ. ծրագիրը կազմւած էր երեք մասից. ա. մասը բաղկացած էր երկու սոլօ երգից—ուսերէն, մի մեղրեկամացիայից և մի բանախօսութիւնից տօնի առթիւ. որ խօսեց ուսերէն պ. Ն. Իսահակեան. բ. մասը բաղկացած էր խմբական երգից (հայերէն), երաժշտութիւնից և ընթերցանութիւնից (Արտվեստի «Վերք Հայաստանի»-ից կարդաց պ. Յ. Յակոբեան). իսկ գ. մասը բաղկացած էր եւրոպական պարերից, որ անցաւ շատ աշխոյժ և ուրախ: Թէ ցերեկոյթին և թէ երեկոյթին ներկայ էին երկսես հոծ բազմութիւն: Երեկոյթը մուտքի կողմից էլ յաջող պիտի համարել. որքան լսեցի, զուտ արդիւնք մնացել է 160 բուրբի:

Յ. Վարդանեան

## ՄԵԾ ՏՕՆԸ ԹԻՒՐԲԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Տրագիզոն, 15 հոկտ.

Հայ գրերու գիւտի 1500 ամեակը և սպազրութեան 400 ամեակը հոս պիտի տօնւի պատրիարքին ժամանւած ատենը որ հաւանակաւ է երկու շաբաթէն հոս լինի:

Որչափ որ հանդէսը յետաձգւած էր, բայց և այնպէս իր օրը պարագ չանցաւ Տրագիզոնի մէջ: Շաբաթ օր ուսուցչական խումբը աշխկանց վարժարանին մէջ կազմակերպւած էր աշակերտական հանդէս մը: Եղան արտասանութիւններ, երգեր և դասախօսութիւն: Սօսեցան վարժարանաց տեսուչը և ուսուցիչներէն Մ. Պալոյեան: Հանդէսը փակեց առաջնորդական փոխանորդ Գ. Վ. Թուրեան:

Ինչորն ալ աշակերտներուն բացատրեցին օրւայ տօներու մեծութիւնը և կատարած դերը հայ կեանքի մէջ: Հանդէսը անդէսը անցաւ բաւականին յաջող և սպաւորիչ:

Կիրակի երեկոյ Դաշնակց. ակումբի վարչութիւնը տօնեց ակումբի սրահին մէջ, Հանդէսը բացաւ Ս. Եսայիան և երկու խօսքով բացատրեց հանդէսի նպատակը:

Յաջորդաբար խօսեցան Ս. Էթմէքճեան, Յարութիւն Պօղոսեան և Մ. Պալոյեան: Ատենախօսութեանց մէջ կը լինէին արտասանութիւններ և միւլիք: Հետաքրքրական նորոյթ էր երևանցի պ. Լևոնի թաղը, որով նւագեց կովկասեան ժողովրդական երգեր:

Թէ դպրոցական և թէ այս հանդէսը սկզբնաւորութիւնն էր մեծ հանդէսին: Առաջնորդարանի կողմէ առանձին յանձնախումբ ընտրւած է պէտք եղած շքեղութեամբ տօնելու համար այդ մեծ տօնը: Սպասեք օրւան և արդիւնքին:

Վահէ

Մենք համախմբուել ենք այսօր Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի շուրջ՝ որպէս զի ի դէմս այս մեծ հոգու մեր երախտագիտութեան հարկը տանք այն բոլոր անւանի և անանուն գործիչներին, որոնք մեր ազգային ինքնուրոյն կուլտուրան հիմնեցին, զարգացրին և պահպանեցին մինչև մեր օրերը:

Այդ երախտագիտութեան մեծութիւնը չի չափոււմ, հարկաւ, այն փաստով, որ այստեղ հաւաքւածների թիւը մեծ չէ, չպէտք է չափուի նաև այն հանգամանքով, որ երախտագիտական այս մեծ տօնը մենք չկարողացանք այնպէս յաւերժացնել, ինչպէս որ հարկն է: Այս հանգամանքներն արդիւնք են մի շարք բազարական և ոչ քաղաքական պատճառների, ուրք վաղանցիկ են, այս անգամ կային, միւս անգամ կարող են չլինել: Մեր երախտագիտութեան համար մենք մի աւելի մեծ կոթող ունենք, որի վրայ կարող ենք այսօր հպարտութեամբ մատնանշել, զա այն փաստն է, որ հայ ժողովուրդը ի դէմս իր առաջաւոր տարրերի, ի դէմս իր ինտելիգենցիայի գիտակցում է այժմ, որ ինքնուրոյն կուլտուրան հայ ժողովրդի ազգային գոյութեան հիմքն է կազմոււմ և պահպանուի, նոյն իսկ ծանր դժարերութիւնների գնով պաշտպանել այդ կուլտուրական ինքնուրոյնութիւնը ամեն կարգի կործանիչ հողմների դէմ...

Մենք հպարտ ենք այս գիտակցութեամբ և այս պատրաստակամութեամբ: Եւ թւում է, թէ Մեսրոպ Մաշտոցի և նրան ընկերակցող ու յաջորդող մեր ազգային-կուլտուրական գործիչների յիշատակը յարգելու համար մի աւելի մեծ կոթող չի կարող լինել:

Հորիզոնը, որ այս Մեծ Տօնի գազափարն առաջին անգամ հրապարակ հանդէս է եղել և ջանք չէ խնայել նրա ժողովրդական բնոյթը ազատովելու համար՝ այսօր, խորին երախտագիտական զգացմունքով պլուս է խոնարհում տօնատէրերի, մեր ինքնուրոյն կուլտուրան կերտողների յիշատակի առաջ և լիակատար հաւատով ասում նւիրական հոգիներին. «Ի՞նչ դառն աշխատանքով, բազմապիսի տառապանքներով պատրաստեցիք այն խաբիւր, որից պէտք է կառչի հայ ժողովրդի ազգային գոյութեան նաւը իր փոթորակի հայրենիքում: Հայ ժողովուրդը երախտագարտ է ձեզ և իր կեանքն ու արիւնը չի խնայել ձեր ստեղծած գործը պաշտպանելու համար»:

## ՄԵԾ ՏՕՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Շ Ո Ւ Շ Ի

Հոկտեմբերի 12-ին Ագուլեաց մայր եկեղեցում տեղոյս դպրոցների հայ աշակերտութեան ներկայութեամբ պատարագ մատուցւեց. ներկայ էին պաշտօնական անձնաւորութիւններ և ուսուցչական խմբերը: Գրերի գիւտի և սպազրութեան նշանակութեան մասին խօսեց Եղիշէ քահանայ Թարխանեանը. պատարագից յետոյ Թեմական դպրանոցում կայացաւ աշակերտական հանդէս. խօսեց Մարիամեան դպրոցի ուսուցիչ Վարդապետեանը: Դէմուրեանի բառաձայն խումբը մի քանի կտոր երգեց. արտասանւոցին մի շարք ոտանաւորներ:

Միևնոյն հանդէսը կրկնւեց հոկտեմբերի 13-ին, կիրակի օրը, պատարագից յետոյ, որ այս անգամ մատուցւեց Վաղանշեցոց եկեղեցում խառն բազմութեան ներկայութեամբ: Հասարակական հանդիսի ժամանակ օրւայ առթիւ բանախօսեց Թեմական դպրանոցի ուսուցիչ Յ. Դաղարշեանը. զրպարանոցը զարգարւած էր:

Լրատու